ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՔՐԻՍՏԻՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Վարդանյան,

ի պատասխան Ձեր 29.05.2025թ. գրության՝ տեղեկացվում է, որ ս.թ. հունիսի 6-13-ը Թումոյի այգում նախատեսված Երևանի միջազգային բալետային փառատոնի շրջանակում բեմի կառուցման աշխատանքների ժամանակ քաղաքապետարանի աշխատակիցների կողմից ահազանգ է ստացվել, որ առկա է բնից շարժվող ծառ: «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի Աջափնյակ վարչական շրջանի աշխատակիցների տեղատեսության արդյունքում պարզվել է, որ շարժվող ծառը՝ կիսաչոր, արմատային վզիկից կեղևազրկված մոտ 1մ բարձրությամբ, թեքված, արմատային համակարգը խարխլված, բակտերիալ հոսքով և տապալման վտանգ ունեցող մանրատերև թեղի է: Հաշվի առնելով նաև միջոցառման ժամանակ ակնկալվող մարդկանց բազմությունը և արտակարգ իրավիճակային հնարավոր դեպքերը, ՀՈԱԿ-ի կողմից սահմանված կարգով կազմվել է ծառահատման տոմս (N 664-25) և հաստատումից հետո թեղին հատվել է:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ծառահատումն իրավաչափ է, քանի որ հիմք է ընդունվել Երևան քաղաքի ավագանու 18. 11. 2009թ-ի թիվ 36-Ն որոշման 4-րդ, 18-րդ, 27-րդ, Երևան քաղաքի ավագանու 02. 12. 2009թ-ի թիվ 48-Ն որոշման 10-րդ և 15-րդ կետերը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ